



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ  
ՈՐՈՇՈՒՄ № 25Լ**

**ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԳԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի  
ԹԻՎ 16Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Նախագահի 14.03.2018թ. թիվ ՆՀ-168-Ա, 15.03.2018թ. թիվ ՆՀ-170-Ա և 27.03.2018թ. թիվ ՆՀ-179-Ա հրամանագրերը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011 թվականի օգոստոսի 26-ի «ՀՀ առաջին ատյանի դատարանների նստավայրերը և դատավորների մասնագիտացումների ցանկը հաստատելու մասին» թիվ 16Լ որոշման հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Հավելվածի 2-րդ աղյուսակի 19-րդ կետի «Դատավոր» սյունակի «Մարաբյան Սերգեյ Ռուբիկի» բառերը փոխարինել «Մանուկյան Հարություն Սենեքերիմի» բառերով, իսկ «Մասնագիտացում» սյունակից հանել «/անչափահասների գործերով/» բառերը,

բ) Հավելվածի 2-րդ աղյուսակի 20-րդ կետի «Դատավոր» սյունակի «Օհանյան Արթուր Ռադիկի» բառերը փոխարինել «Հովհաննիսյան Արման Համլետի» բառերով,

գ) Հավելվածի 10-րդ աղյուսակի 6-րդ կետի «Դատավոր» սյունակից հանել «Հարությունյան Մնացական Հայկի» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի մարտի 28-ից:

**Հայաստանի Հանրապետության  
դատարանների նախագահների  
խորհրդի նախագահ**

**Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**

2018թ. մարտի 27  
ք. Երևան